ԱՇԽԵՆ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 37.016:811.19

ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԲԱՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Բանալի բառեր. լեզվամտածողություն, բայ, անցյալ կատարյալի հիմք, խոնարհման տիպեր, ներգործաձև, կրավորաձև, խառն, հոլովում, գրաֆիկական աղյուսակ, քերականական բանձևումներ:

Ключевые слова: лингвистическое мышление, глагол, основа совершенного прошлого, пассивный, смешанный, формулы спряжений и склонения существительных, графическая таблица, грамматические формулы.

Key words: linguistics, verb, the basis of the past perfect, the formulas, the acting, the passive, the mixed, the graph, the graphical table, the grammatical formulas.

Երրորդ հազարամյակում տեխնոլոգիաների արագ զարգացումը, հասարակական, քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, անգամ ազգային, հայրենասիրական, ընտանեկան արժեքների վերարժևորումը թելադրում են մտածողության արդիականացում, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման համար այդ ամենի մատուցման, փոխանցման, ուսուցման արդյունավետ մեթոդների և միջոցների կիրառման հմտություններ:

Ցանկացած առարկայի ուսուցում պետք է լինի պլանավորված, խթանիչ և սովորողների հետաքրքրություններն ակտիվացնող: Ուսուցման գործընթացում ցանկալի է ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրներին.

1. Ապահովել ուսուցանողի /ուսուցչի, դասախոսի/ տրամաբանական գործողությունները՝ պատմել, հաղորդել, ցուցադրել, բացատրել, մեկնաբանել, զրուցել և այլն:
2. Ուսուցանողը /ուսուցիչը, դասախոսը/ ապահովում է հոգեբանական գործողություններ՝ խթանում, քաջալերում, վերահսկում, խրախուսում, պլանավորում, գնահատում և այլն:
3. Ուսուցանողը /ուսուցիչը, դասախոսը/ ուշադրություն է դարձնում գիտական, տրամաբանական մտածողության և բարոյական արժեքների ձևավորվելուն:

Բնականաբար սույն հոդվածում անդրադառնալու ենք այս խնդիրների իրագործմանը գրաբարի դասընթացում: Գրաբարն ուսումնասիրվում է ավագ դպրոցում, բուհական տարբեր դասընթացներում: Բուհական դասընթացներում այն ուսումնասիրվում է տարբեր կողմերից՝և՛ քերականությունը, և՛ գրաբարով ավանդված ծավալուն գեղարվեստական և գիտական գրականությունը: Ըստ այդմ պետք է տարանջատել գրաբարի դասընթացում երկու ուղղություն՝ 1. քերականության ուսուցում՝ վերջնարդյունքում ունենալով լեզվական իրողությունների վերլուծություններ կատարելու հմտություններ,

2. գրաբարյան տեքստեր ընթերցելու և թարգմանելու/ընկալելու/ կարողությունների զարգացում:

Գծակարգերի կազմումը կամ պատրաստի աղյուսակների գործածությունը լեզվաբանության դասերին, կարծում ենք, մեծ նշանակություն ունի: Քանի որ մարդկանց ընկալման կարողությունները տարբեր են, նրանք, նյութը լսելով, ստեղծում են տարբեր մոդելներ:

Առաջնահերթ փորձենք անդրադառնալ առաջին խնդրին: Վերջին ժամանակներում լեզուների ուսուցման հիմնախնդիրը լեզուների հաղորդակցական գործառույթն է՝վերջնարդյունք տիրապել և հաղորդակցվել տվյալ լեզվով: Սակայն գրաբարը/հին հայերենը/, լատիներենը, հին հունարենը և այլ դասական լեզուներ, որոնք մեռած են համարվում, քանի որ խոսող հանրություն չկա, այլ նպատակներով են ուսուցանվում: Առաջնահերթ վերոհիշյալ լեզուները պարունակում են բավական հարուստ գիտական հիմնանյութ, որոնց վրա կառուցվում է արդի լեզուների լեզվաբանությունը մասնավորապես, մյուս կողմից, իբրև կանոն, բավական մանրամասն, գիտական հետազոտության են ենթարկվում նրանցով ժառանգված թե՛ գիտական, թե՛ գեղարվեստական երկերը: Քերականության ուսուցմանը հիմնավորապես ուշադրություն են դարձնում լեզվակաբանական բաժիններում: Հին հայերենի կամ գրաբարի ուսուցումը անհարաժեշտ է և ՛լեզվաբանությունն ուսումնասիրողներին առհասարակ, քանի որ հայերենը հնդեվրոպական լեզու է, և՛ հայ լեզվաբանությունն ուսումնասիրողներին մասնավորապես, որովհետև արդի հայերենի հնչյունական համակարգը, բառապաշարը, քերականական իրողությունների մեծ մասը ժառանգել ենք հին հայերենից:

Գրաբարի քերականության ուսուցումը պետք է խարսխվի ժամանակակից հայերենի քերականական իրողությունների իմացության հիման վրա: Այսպես, օրինակ, ընտրենք քերականական որևէ իրողություն և փորձենք ցույց տալ դրա ուսուցման առանձնահատկությունները: Ձևաբանության մեջ բայն իբրև խոսքի մաս ունի բազում քերականական կարգեր, միաժամանակ թե՛ գրաբարում, թե՛ հայերենի գրավոր շրջանի

մյուս շրջափուլերում բայն աչքի է ընկնում քերականական ձևերի բազմազանությամբ: Մասնավորապես կանգ առնենք բայահիմքերից անցյալի հիմքի ուսուցմանը:

Կարծում ենք, բայահիմքերն այն հիմնաքարն են, որոնցով հեղյուսվում է ողջ բայական համակարգը: Գրաբարում առանձնացնում ենք ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը: [1]

Ներկայի հիմքը որոշելու համար բայի անորոշ դերբայից առանձնացնում ենք դերբայական մասնիկը: Անցյալ կատարյալի հիմքը, ըստ կազմության, լինում է երկու տեսակ՝ա. պարզ կամ արմատական, բ. բաղադրյալ, որն էլ իր հերթին ունի երկու ենթատեսակ՝ ա. ցոյական, բ. ի թույլ բաղադրիչ ունեցող: Վերջին ենթատեսակը որոշ գրաբարագետներ չեն ընդունում և այդ բայերը դասում են պարզ կամ արմատական հիմք ունեցող բայերի թվին:[2]

Աիցյալ կատարյալի հիմքն ունի կազմության որոշ հետաքրքիր օրինաչափություն.

Ե, Ի, Ու խոնարհման աձանցավոր և Ու խոնարհման պարզ բայերն ունեն պարզ արմատական հիմք:

Ա, Ե, Ի խոնարհման պարզ և Ա խոնարհման աձանցավոր բայերն ունեն ցոյական հիմք:

Հիմքը կոչվում է ցոյական, քանի որ պարունակում է <<Ց>>: Հիմքակազմիչ աձանցները լինում են երեք տեսակ՝ Աց, որոնք հիմնականում ստանում են Ա խոնարհման բայերը, Եաց, որոնք ստանում են Ե և Ի խոնարհման պարզ բայերը, Ոյց, որոնք ստանում են պատճառական բայերը:[3]

Ի և Ու խոնարհման աձանցավոր բայերի մի մասն ունի Ի թույլ բաղադրիչով հիմք:

Այս տեսական բանաձևերն ավելի պատկերավոր կբացատրվեն, բնականաբար, որևէ գծակգրական աղյուսակով: Մենք նախընտրել ենք <<Մտքի քարտեզ>>:[4] Փորձենք քարտեզագրել անցյալ կատարյալի հիմքը գրաբարում. հիմնաքարն ընտրում ենք <<անցյալ կատարյալի հիմք>> հասկացությունը.

---

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 108:

[2] Տե՛ս Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1992, էջ 27:

[3] Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 108:

[4] Տե՛ս Ուսուցման ժամանակակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ/Լոռու մասնաճյուղ/, ք. Վանաձոր, 2008:



Մեկնաբանենք, թե ինչու մասնավորապես նախընտրեցինք գծագրական աղյուսակ: Ինչպես գիտենք, գոյություն ունեն ընկալման տարբեր ձևեր՝

տեսողական ընկալում, լսողական ընկալում, ընկալման առարկայականությունը, իմաստավորվածությունը, ընտրողականությունը:[5]

[5] Տե՛ս Ս. Արզումանյան, Հոգեբանություն, Երևան, 2003, էջ 87:

Մենք ստեղծել էինք որոշակի բանաձևում 3և 1 հարաբերությամբ՝ պարզ և ածանցավոր բայեր և հակառակը, ածանցավոր և պարզ բայեր: Քերականական նյութը ներկայացվեց թե՛ բառային բանաձևմամբ, թե՛ գծակարգով, քանի որ մարդկանց ընկալունակության ընդունակությունները տարբեր են: Ամենակարևորը, մենք փորձեցինք հաշվի առնել բոլոր ուսանողների ընկալման հնարավորությունները:

Այժմ անդրադառնանք բացառություններին: Եթե բացառություն է. ապա անհարժեշտ պարտադրանքով պետք է անգիր անել: Սակայն անգիր արված նյութը կարող է շատ արագ մոռացվել: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ քերականության մեջ մասնավորապես թե՛ դպրոցում, թե՛ բուհում պետք է խուսափել երկու կարևոր գործոնից՝ ուսանող-աշակերտին անգիր հանձնարարելուց և քերականահեղձ եզրույթներից: Մյուս կողմից բանաձևումներով, համեմատություններով սովորողի մոտ ձևավորվում են վերլուծական-մտածական կարողություններ:

Նշված կանոններից նկատելի շեղումներ.

Բառնալ-բարձ	ասել-ասաց	հեղուսել-հեղոյս	նստիմ-նիստ	ընթեռնուլ-ընթերց
Դառնալ-դարձ	ածել-ած		զգածիմ-զգած	ընկենուլ-ընկեց
Բանալ-բաց	գիտել-գիտաց		դիպիմ-դիպեաց-դիպ	զգենուլ-զգեց
Թանալ-թաց	բերել-բեր			լնուլ-լից
մարթել-մարթաց	կարել-կարաց			խնուլ-խից,
մերկել-մերկաց	հանել-հան			յենուլ-յեց

Բացառությունները ներկայացվեցին պարզապես ըստ բայական լծորդությունների: Այստեղ ցանակալի համեմատություններ-վերլուծություններ կատարել արդի հայերենի անցյալի հիմքի կազմության

հետ: Այս համեմատությամբ ամրապնդվում են ուսանողի մոտ վերլուծություններ կատարելու կարողությունները, ինչպես նաև նմանատիպ աշխատանքներով ձևավորվում են քերականական մտածական և ստեղծագործական կարողություններ: Բացի այս՝ հինհայերենյան որոշ բայերի անցյալի հիմքեր արդի հայերենում գործածվում են իբրև բայարմատներ, ինչպես խից-խցան, մերկաց-մերկացնել, ած-մտածել և այլն: Այս մոտեցումը նպաստում է արդի հայերենի ավելի խորիմացության, որը հետագայում կարող է օժանդակել լեզվական մտածողության ավելի խորը ձևավորմանը:

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևերն ունեն խոնարհման տիպեր:[6]

Այդ տիպերը նույնպես բաշխվում են 3/1 հարաբերությամբ: Ներգործաձև խոնարհման պատկանում են **Ա, Ե, Ու** լծորդության պարզ բայերը և Ե լծորդության ածանցավոր բայերը: Կրավորաձև խոնարհվում են **Ա, Ի, Ու** լծորդության ածանցավոր բայերը և ի լծորդության պարզ բայերը: Խառն խոնարհման պատկանում են **Ի** լծորդության Չ ածանց, Նչ ածանց և **Ու** լծորդության ածանցավոր բայերը:

[6] Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ126:

Խոնարհման տիպերը անցյալ կատարյալի հիմքից կազմվող



Նման բանաձևումները բնականաբար նպաստում են նյութի ավելի խորը յուրացմանը: Ընդ որում մենք առաջարկում ենք աղյուսակի կիրառման երկու եղանակ: Առաջինը, օգտագործելով գրատախտակը, ուսանողների օգնությամբ քայլերով կազմել այն.

Քայլ առաջին՝ խոնարհման տիպերը,

Քայլ երկրորդ՝ բայի լծորդությունները,

Քայլ երրորդ՝ բայի կազմությունը:

Երկրորդ, ներկայացնել այս ամենը սահիկաշարով՝ ըստ վերը նշված հերթագայության: Երկու եղանակներն էլ ունեն իրենց առանձնահատկությունները, գրատախտակի օգտագործմամբ ուսանողն ինքը մասնակցում է աղյուսակի ստեղծմանը և կատարում է եզրահանգումներ: Սահիկաշարի օգտագործումը ավելի մեկնողական

բնույթ ունի, քանի որ դասախոսը ներկայացնում է արդեն իր կողմից կառուցված աղյուսակը, որը պետք է հանգամանորեն վերլուծել: Սակայն սահիկաշարում էլ կարելի է հետաքրքիր մոտիվացիա ստեղծել հարցադրումներով, օրինակ՝ <<Խոնարհման տիպերը արդի հայերենում ինչով են տարբերվում>>:

<<Ի լծորդության բայերի հետագա գոյավիճակը>>, <<Ու լծորդության բայերի հետագա գոյավիճակը>>: Բնականաբար այս հարցադրումները կարելի է կատարել նաև բանավոր, բայց սահիկաշարի գործածության ժամանակ տեսողական և լսողական ընկալման միաժամանակ գործածությունը նպաստում է դասը առավել հետաքրքիր անցկացնելուն:

Քերականական բանաձևումներ կարելի է ստեղծել հոլովման համակարգն ուսումնասիրելիս նույնպես: Այսպես, օրինակ, անվանական հոլովումը վերջադրական և ներդրական է, պարզ և խառն:[7] Հոլովման ընդհանրությունները՝

1. Բացառական հոլովի եզակի թվի հոլովակերտը,
2. Հոգնակերտ մասնիկները՝ ուղղականում՝ ք, հայցականում՝ ս:
3. Հայցական և բացառական հոլովների հետ գործածվող զ և ի նախդիրները:
4. Հոգնակերտ հոլովակերտները՝Ք-Ց-Ց-Ս-Ց-Ք հերթագայությամբ:
5. Խառն հոլովման հարացույցի ուսուցումը՝ հիմնված պարզ հոլովման հարացույցի ուսուցման հենքի վրա:
6. Ե՛վ պարզ, և՛ խառն հոլովումներն ունեն վերջադրական և ներդրական բնույթ:

[7] Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 15-50:

Մենք փորձեցինք անդրադառնալ գրաբարի դասընթացի ընդամենը մի քանի առանձնահատկությունների, որոնք նպաստում են ուսանողի մոտ, առհասարակ, լեզվամտածողության, վերլուծական մտքի ձևավորմանը: Բնականաբար, այս հարցադրումն այնքան տարողունակ է, որ մեկ հոդվածում հնարավոր չէ ամբողջովին ներկայացնել: Մենք փորձել ենք բավական ընդհանրական անդրադարձներ կատարել, սակայն, համոզված ենք, որ նմանատիպ բանաձևումների կիրառումը խիստ անհրաժեշտ է լեզվամտածողության ձևավորման գործընթացին:

Ա. Յուզբաշյան

Լեզվամտածողության ձևավորումը գրաբարի դասընթացում

Ամփոփում

Լեզվամտածողությունը այն կարևոր վերջնարդյունքն է, որը ձևավորվում է ցանկացած լեզվի դասավանդման գործընթացում: Հաշվի առնելով մարդու ընկալման տարբեր ձևերը՝ սույն հոդվածում անդրադարձել ենք քերականական իրողությունների դասավանդման որոշ առանձնահատկությունների՝ առաջարկելով բանաձևումներ բայական և հոլովման համակարգում:

А. Юзбашян

Формирование лингвистических мышлений в древне армямнском языке

Резюме

Лингвистическое мышление - это важный результат, который формируется в любом лингвистическом учебном процессе. Принимая во внимание различные формы человеческого восприятия, в этой статье мы затронули некоторые из реалий грамматики, предложив формулы спряжений и склонения существительных.

A.Yuzbashyan

Formation of linguistics in the Grabar course

Summary

Language linguistics is an important result that is shaped in any language teaching process. Taking into account the different forms of human perception, we have touched upon some of the realities of grammar education in this article by proposing resolutions and verbal.